**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**

# ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

**24-15**

« 13» ապրիլի 2015թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Ներկայացնում ենք Վահագնի համայնքի ավագանու 2015 թ. թիվ 6 , թիվ 7 , թիվ 8 , թիվ 9 , թիվ 10 –Ա և թիվ 11 որոշումները :

Առդիր 7 թերթ :

Վահագնիի գյուղապետի ժ/պ ________________ Ա. Հովհաննիսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 30» մարտի 2015 թվականի N 6

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 30-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով Վահագնի համայնքի ավագանին որոշում է .

Հաստատել Վահագնի համայնքի ավագանու 2015թ.-ի մարտի 30-ի նիստի օրակարգը:

Օրակարգ

Վահագնի համայնքի ավագանու 2015թ.-ի մարտի 30-ի նիստի

1. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Վահրամ | | | |
| Փարեմուզյան Միեր | | | |
| Քոչինյան Բորիս | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| Մխիթարյան Վրեժ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 30» մարտի 2015 թվականի N 7

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 5-րդ և 20-րդ կետերով, 44-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, համայնքի ավագանու 2015 թվականի փետրվարի 05-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Վահագնի համայնքի ղեկավարին վերապահված կամավոր լիազորությունների իրականացման և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների հատկացման կարգը հաստատելու մասին» թիվ 2--Ա որոշմամբ, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները՝

Վահագնի համայնքի ավագանին որոշում է.

1.Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն կից հավելվածի:
2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ սույն որոշման կատարման ուղղությամբ և որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում բնակիչներին վճարել հատկացված գումարները:
3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
| --- | --- | --- | --- |
| Կիրակոսյան Վահրամ | [signature] | | |
| Փարեմուզյան Մհեր | [signature] | | |
| Քոչինյան Բորիս | [signature] | | |
| Քոչինյան Տելեման | [signature] | | |
| Մխիթարյան Վրեժ | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ [signature, stamp] Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Լոռու մարզի
Վահագնի համայնքի ավագանու
2015 թվականի մարտի 30-ի N 7 որոշման

# ՑՈՒՑԱԿ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1) Սեդա Սամսոնի Մելքումյան — քառասուն հազար դրամ,

2)Լուսիկ Միքայելի Քոչինյան — քառասուն հազար դրամ,

ԸՆԴԱՄԵՆԸ՝ ութսուն հազար դրամ:

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ _______________ Ն. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«10» ապրիլի 2015 թ. N 8**

ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով Վահագնի համայնքի ավագանին որոշում է .

Հաստատել Վահագնի համայնքի ավագանու 2015թ.-ի ապրիլ 10-ի նիստի օրակարգը:

Օրակարգ
Վահագնի համայնքի ավագանու 2015թ.-ի ապրիլ 10-ի նիստի

1. Վահագնի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականությունը հանդիսացող հողամասերից անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրելու մասին :
2. Լոռու մարզպետի կողմից 2015 թվականի 1-ին եռամսյակում իրականացված վարչական հսկողության մասին:
3. Վահագնի համայնքի ղեկավարի 2015թ.-ի բյուջեի I եռամսյանկի հաշվետվությունն ավագանուն ներկայացնելու մասին :

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Վահրամ | | | |
| Փարեմուզյան Միեր | | | |
| Քոչինյան Բորիս | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| Մխիթարյան Վրեժ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ՎԱՀԱԳՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ**

# ՈՐՈՇՈՒՄ

**«10» ապրիլի 2015 թ. N 9**

## *ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ՄՇՏԱԿԱՆ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությունը համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

1.Տալ համաձայնություն Վահագնի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված պետական սեփականություն հանդիսացող հողամասերից՝ 06-0103-0007-0001-01 ծածկագրով 1.29848 հա բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրել <<Վահագն>> ռազմահայրենասիրական բարեգործական հասարակական կազմակերպությանը, <<Վահագնի պուրակ >> կառուցելու նպատակով:

2. Համայնքի ղեկավար Պ. Քոչինյանին՝ պետական լիազոր մարմնի կողմից համապատասխան համաձայնությունը ստանալուց հետո օրենսդրությամբ սահմանված կարգով <<Վահագն>> ռազմահայրենասիրական բարեգործական հասարակական կազմակերպության հետ կնքել անհատույց (մշտական) օգտագործման իրավունքով տրամադրման պայմանագիր:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Վահրամ | | | |
| Փարեմուզյան Միեր | | | |
| Քոչինյան Բորիս | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| Մխիթարյան Վրեժ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի

Վահագնի համայնք, գ.

հեռ.093-07-98-78

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 10 »  ապրիլի  2015 թվականի N 10  - Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ 2015 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 32-րդ կետով՝ համայնքի ավագանին որոշում է.

1.ՀՀ Լոռու մարզպետի կողմից 2015 թվականի 1-ին եռամսյակում Վահագնի համայնքի ղեկավարի սեփական և պետության պատվիրակված լիազորությունների և համայնքի ավագանու լիազորությունների նկատմամբ իրականացված վարչական հսկողության ժամանակ կազմված ակտի վերաբերյալ համայնքի ղեկավարի հաղորդումը ընդունել ի գիտություն:

2.Համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ ակտում արձանագրված թերությունների և բացթողումների ուղղման և կանխարգելման ուղղությամբ:

3.Ձեռնարկված միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնել ՀՀ Լոռու մարզպետին և ավագանուն:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Վահրամ | | | |
| Փարեմուզյան Միեր | | | |
| Քոչինյան Բորիս | | | |
| Քոչինյան Տելեմակ | | | |
| Մխիթարյան Վրեժ | | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
«ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ»
ՎԱՀԱԳՆԻԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ν 11

«10» ապրիլի 2015թ.

## ՎԱՀԱԳՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 2015Թ. ԲՅՈՒՋԵԻ I ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱԳԱՆՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով « Տեղական ինքնակառավարման մասին » ՀՀ օրենքի 16-րդ , 69-րդ հոդվածներով և հիմք ընդունելով ՀՀ բյուջետային համակարգի մասին օրենքի 35-րդ հոդվածով .

Համայնքի ավագանին **որոշեց**՝

Ընդունել ի գիտություն ՀՀ Լոռու մարզի Վահագնի համայնքի ղեկավարի 2015թ.-ի բյուջեի I եռամսյանկի ֆրնանսատնտեսական գործունեության հաշվետվության վերաբերյալ ներկայացված հաղորդումները:

| Համայնքի ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կիրակոսյան Վահրամ | [signature] | | |
| Փարեմուզյան Մհեր | [signature] | | |
| Քոչինյան Բորիս | [signature] | | |
| Քոչինյան Տելեմակ | [signature] | | |
| Մխիթարյան Վրեժ | [signature] | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ժ/Պ [signature] Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ